

Ա. ԿԱՐԻՆՅԱՆԻ «ԱԿՆԱՐԿՆԵՐ ՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ԳՐՔԻ ՄԱՍԻՆ

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակությամբ նորերս լույս տեսավ անվանի գրականագետ Արտաշես Կարինյանի «Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության» ստվարածավալ աշխատությունը։ Երա հեղինակի նախագծած ևրեր հատորանոց ուսումնասիրության առաջին հատորն է, որը նվիրված է միայն հնդկահայ մամուլի պատմությանը։

Մամուլի պատմությունը սերտորեն կապված է հասարակական մտքի պատմության հետ։ Մամուլը արտացոլում է ժողովրդի հասարակական կյանքը, նրա հասարակական կեցությունն ու գիտակցությունը։

Շուրջ 150 տարվա պատմություն ունի հայ պարբերական մամուլը։ Հայ ժողովուրդը Հայաստանում և Հայաստանից դուրս, աշխարհի զանազան երկրների հայաքնակ վայրերում մեծամեծ դժվարություններ հաղթահարելով, ստեղծել է մի քանի հազար անուն թերթեր և ժուռնալներ, որոնք մեր կուլտուրայի զանազանում իրենց արժանի տեղն են գրավում։ Մեր շնորհալի ժողովուրդը գրականության, գիտության, արվեստի և կուլտուրայի մյուս ճյուղերի հետ միասին ստեղծել է այնպիսի հարուստ մամուլ, որով մենք իրավամբ պարծենում ենք։ Հայ պարբերական մամուլը անսպառ նյութ է պարունակում մեր ժողովրդի տնտեսական, քաղաքական և կուլտուրական կյանքի պատմության վերաբերյալ։ Ահա թե ինչու մամուլի պատմության գիտական, մարքսիստական ուսումնասիրությունը մեզ համար առաջնահերթ նշանակություն ունի։

Հայ պարբերական մամուլի պատմությունը, ինչպես հայտնի է, սկսվում է Հնդկաստանի Մադրաս քաղաքում 1794—1796 թթ. հրատարակված «Ազգարար»-ից։ Բայց, մինչև «Ազգարարի»-ի և Հնդկաստանում հրատարակված մյուս պարբերականների մասին խոսելը, ընկ. Կարինյանը հանգամանորեն քննության է առնում հայ պարբերական մամուլի պատմության վերաբերյալ եղած գրականությունը։ Այստեղ նա խոսում է Զարբհանլյանի, Գալեմքարյանի, Ա. Նրիցյանի, Լեոյի, Գ. Լևոնյանի, Պոտուրյանի և ուրիշների աշխատությունների մասին, գնահատում և վերագնահատում է նրանց կատարած դրական աշխատանքը, ինչպես և ցույց է տալիս նրանց սխալներն ու թերությունները։ Այս բաժնում ընկ. Կարինյանը առանձնապես սուր քննադատության է ենթարկում նշված ուսումնասիրողներից ոմանց կղերա-քուրժուական, իդեալիստական կոնցեպցիան, իրավացի կերպով նկատում է, որ նրանք ելնելով հակագիտական, հակապատմական դիրքերից, աղավաղել են մեր մամուլի պատմությունը, անտեսել դասակարգային, սոցիալական ներհակությունները, իդեալականացրել ֆեոդալական և քուրժուական անցյալը, տենդենցիոզ կերպով թերագնահատել դեմոկրատական, ռևոլյուցիոն պրոգրեսիվ ուղղությունը։

Ը տարբերություն նախորդ ըուր ուսումնասիրողների, ընկ. Կարինյանը ելնելով մարքս-լենինյան դիրքերից, մամուլի պատմության հարցերը քննարկում և լուսաբանում է պատմական տվյալ ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների և հասարակական-քաղաքական ուղղությունների հետ ունեցած սերտ կապերի մեջ։ Նա վճռականապես մերժում է հայ կղերա-քուրժուական պատմաբանների իդեալիստական կոնցեպցիաները, մամուլի ծագման ու զարգացման հարցերը առանձին անհատների կամ «մեկենասների» հետ կապելու փորձը։ Պատմական կոնկրետ փաստերի հիման վրա ընկ. Կարինյանը բացահայտում է ոչ միայն հայ պարբերական մամուլի առաջացման նախադրյալները, այլև հասարակական-քաղաքական միջավայրի ազդեցությունը առանձին թերթերի, նրանց հրատարակիչների ու խմբագիրների վրա։ «Պատմական ժամանակաշրջանին և կոնկրետ հասարակական միջավայրին հատուկ կնիքը,— դրում է հեղինակը,— դրեթե միշտ նշմարվում է շատ և շատ պարբերական օրգանների մեջ» (էջ 7)։

Ընկ. Կարինյանի այս աշխատության մեջ առաջին անգամ ծավալուն քննադատության են ենթարկված հայ պարբերական մամուլի պատմության մեջ տեղ գտած իդեալիստական, հակագիտական կոնցեպցիաները: Առանց այդպիսի քննադատության, հասկանալի է, անհնարին կլինե՞ր շարադրել հայ ժուռնալիստիկայի մարքսիստական պատմությունը: Ի պատիվ ընկ. Կարինյանի, պետք է ասել, որ նա իր ուսերի վրա է վերցրել ոչ միայն այդ, այլև հայ պարբերական մամուլի ամբողջական պատմություն շարադրելու դժվարին գործը: Նրա ուսումնասիրությունամբ սկիզբ է դրվում հայ պարբերական մամուլի մարքսիստական պատմությունը:

Այնուհետև՝ «Գաղութահայ օջախները 17—18-րդ դարերում» գլխում հեղինակը հակիրճ կերպով շարադրում է Եվրոպայի ու Ասիայի հայ գաղութների պատմությունը: Նա հատկապես ծանրանում է Ռուսաստանի, Լեհաստանի, Ղրիմի, Պարսկաստանի և Հնդկաստանի հայ գաղթավայրերի վրա, փաստական հարուստ նյութերի հիման վրա նկարագրում այդ երկրների հայ բնակչության բաղադրական, տնտեսական և կուլտուրական վիճակը:

Պատմական այդ էքսկուրսները, անշուշտ, միշտ չէ, որ հեղինակին հաջողվել են: Բայց նույնիսկ անհաջող էքսկուրսների ժամանակ ընկ. Կարինյանը այնպիսի դիպուկ և հետաքրքիր դիտողություններ է անում, որոնք, անկասկած, օգտակար կարող են լինել գաղութահայերի պատմությամբ զբաղվողների համար:

Թուն նյութից կատարված շեղումներն այս գլխում սովորականից ավելի են: Մեր կարծիքով, հարկ չկար միջին դարերում տեղի ունեցած հայերի գաղթի, Ղրիմի, Լեհաստանի և այլ երկրների հայ գաղթավայրերի մասին մանրամասն խոսել, քանի որ դրանք օրգանապես քիչ են կապվում այս հատորի բուն նյութի հետ: Դրան հակառակ, կարելի էր և պետք էր ավելի հանգամանորեն ներկայացնել Հնդկաստանի հայ գաղթի պատմությունը, հնդիկ մեծ ժողովրդի հետ հայերի ունեցած տնտեսական, բաղադրական և կուլտուրական կապերը: Հայ-հնդկական հարաբերությունները հարուստ պատմություն ունեն: Աշխատությունը մեծապես կշահեր, եթե այդ հարաբերությունների վրա ավելի մեծ ուշադրություն դարձվեր:

Ընկ. Ա. Կարինյանի ուսումնասիրության ուշագրավ մասերից է «Հայ մամուլի և հրապարակախոսության սկզբնավորողները» գլուխը: Այստեղ նա աշխատել է ցույց տալ հայ հասարակական տարրեր խավերի դրությունը, նրանց բաղադրական և կուլտուրական մտորումներն ու ձգտումները: «Հին Իրանի և Թուրքիայի սահմաններում ցրված բնակչությունը,— գրում է նա,— դաժան օրեր էր ապրում: Շատ ծանր էր բազմազան բռնակալների լուծը առանձնապես գյուղացիության և արհեստավորների համար» (էջ 140):

Նկարագրելով սոցիալական միջավայրը, հեղինակն այնուհետև խոսում է հայկական տպագրության ծագման ու զարգացման մասին, քննադատում է առաջին տպագիր գրքերը, նրանց հրատարակիչներին ու հեղինակներին: Բայց վերջում նա կանգ է առնում 18-րդ դարի հայ ազատագրական շարժման մի շարք աչքի ընկնող ներկայացուցիչների՝ Իսրայել Օրու, Հովսեփ Էմինի, Մովսես Բաղրամյանի, Շահամիր Շահամիրյանի գործունեության վրա, որտեղ քննադատական ճիշտ դիտողությունների հետ մեկտեղ, մեր կարծիքով, անում է նաև ոչ ճիշտ հետևություններ:

Խոսելով Իսրայել Օրու մասին ընկ. Կարինյանը գրում է. «Թե Լևոյի և թե ուրիշ պատմաբանների երկերի մեջ այդ գործիչի իրական դերը գերազանահատվել է: Վաճառական լինելով հանդերձ, այդ գործիչն իր գրության մեջ ոչ մի տնտեսական պրոբլեմի վրա չի ծանրանում: Ասուպի նման նա հանդես է գալիս հայրենի վայրերում և ապա ասուպի նման էլ անհետանում» (էջ 174):

Ոչ մի կերպ չի կարելի համաձայնվել ընկ. Կարինյանի հետ, թե Օրին ասուպի նման էրևաց և ասուպի նման անհետացավ, առանց հետք թողնելու: Օրին եղել է, մնում է և կմնա որպես իր ժամանակի հայ ազատագրական շարժման ամենախոշոր դեմքը: Նա 17-րդ դարի վերջի և 18-րդ դարի սկզբի հայ բաղադրական գործիչներից առաջինն էր, որ Հայաստանի ազատագրությունը պարսկական և թուրքական բռնակալության լծից կապեց Ռուսաստանի օգնության հետ, ամուր հիմք դրեց հայերի ուսական օրիննադասի: Նրա գծած ուղիով ընթացան հետագա սերունդները: Հայտնի բոլոր պատմական վավերագրերը այդ են ապացուցում:

Այնուհետև, խոսելով Հովսեփ Էմինի մասին, քննադատելով պրոֆ. Արդար Հովհաննիսյանին, որ նա իր «Иосиф Эмин» աշխատության մեջ իբր թե զատ անսպասելի կերպով էմինին դարձնում է հայ «ազգային-ազատագրական շարժման» «ականավոր ջահակիր» և մշուշի մեջ թողնում նրա հասարակական հայացքներն ու մտորումները (էջ 174—175), ընկ. Կարինյանը, ինչպես Օրու, այնպես էլ էմինի կատարած դերը թերագնահատում է: Նա գրում է, որ Օրին և

Հմինքը և զի ևն սոցիալական վերնախավի աննշան մի շերտի գաղափարախոսներ, կտրված հայրենի երկրից ու ժողովրդից և «ասուպների նման անհետացել են մշուշների մեջ» (էջ 175)։

Հարց է ծագում. և՛ թե, Օրին և էմինը, նրանց գաղափարներն ու քաղաքական ծրագրերը կտրված են հայրենի երկրից և ժողովրդից, ապա ովքե՞ր են ժողովրդի ազատագրական շարժման գաղափարախոսները, կամ որոնք են նրա քաղաքական ծրագրերը։ Տպավորություն է ստացվում, որ 18-րդ դարի հայ ազատագրական շարժումները ոչ մի կապ չեն ունեցել ժողովրդի հետ, որ դրանք եղել են սոսկ վերնախավի մի շերտի հետ կապված շարժումներ։ Այսպես դնահատելով հանդերձ հայ ազատագրական շարժումները և այդ շարժման պարագլուխներին, ընկ. Կարինյանը նույնիսկ կշտամբում է մեր «անգամ շատ բարեխիղճ պատմաբաններին» (իրեն բառերն են — Վ. Պ.) «ազգայնական պատմագրության բուրժուական պատրիոտիկայի» իշխող տրագիկաններին հետևելու մեջ (էջ 175)։

Իր աշխատության մեջ, մեր կարծիքով, ընկ. Ա. Կարինյանը ճիշտ չի գնահատում նաև Մովսես Բաղրամյանի, Շահամիր Շահամիրյանի և 18-րդ դարի երկրորդ կեսի ազատագրական շարժման մյուս ներկայացուցիչների գործունեությունը։ Նա պնդում է, որ նրանց գործունեության համար ամուր հենարան չկար, ժխտում է տարբեր հոսանքների առկայության փաստը 18-րդ դարի հայ ազատագրական շարժման մեջ, նույնացնում է Արղությանի և Շահամիրյանի ծրագրերը. «Արղությանը և Շահամիրյանը, ըստ էության, միևնույն սոցիալական հիմքի վրա էին հենվում» (էջ 177), «ըստ էության Շահամիրյանը նույնպես հանդիս էր գալիս միապետության պաշտպանի դերում» (էջ 178), գրում է ընկ. Կարինյանը։

Այնուհետև՝ խոսելով Մադրասի հայ գաղութի քաղաքական գործիչների կապերի մասին ընկ. Կարինյանը գրում է, թե «այդ գաղութը կապված չէր ոչ «հայ ղեմակրատիայի» և ոչ էլ նույնիսկ հնդկահայ օջախներից դուրս ցրված հայ բնակչության հետ» (էջ 219, ընդգծումը մերն է — Վ. Պ.)։

Ընկ. Կարինյանի այս պնդումը հակասում է գոյություն ունեցող պատմական փաստերին։ 18-րդ դարի երկրորդ կեսին հնդկահայ գաղութը, հատկապես Մադրասի հայ գաղութը, տնտեսական, քաղաքական և կուլտուրական սերտ կապերի մեջ էր գտնվում Հայաստանի, Վրաստանի, Ռուսաստանի, Վենետիկի և մի շարք այլ վայրերի հայ բնակչության հետ։ Ավելին. Մադրասի հայ գաղութը այդ ժամանակ դառնել էր հայ ազատագրական մտքի ամենաաչի լինկնող կենտրոնը, Մադրասի քաղաքական գործիչների խմբակի հրատարակությունները (Տետրակ որ կոչի հորդորակ, Որոգայթ փառաց և նշավազ, իսկ հետագայում նշանավոր «Ազգաբարը» և այլն) տարածվում էին զանազան հայաբնակ վայրեր, Բաղրամյանի և Շահամիրյանի անունները, նրանց գործն ու գաղափարները այս ու այն չափով հայտնի էին ոչ միայն Հնդկաստանի, այլև Էջմիածնի, Ղարաբաղի, Թիֆլիսի, Աստրախանի, Մոսկվայի, Պետերբուրգի, Վենետիկի, Պոլսի, հավանաբար և ուրիշ այլ վայրերի հայ գործիչներին, ինչպես և ոռոտական, վրացական, պարսկական, անգլիական ու թուրքական արքունիքներին։ Մեր ձեռքի տակ բազմաթիվ փաստեր կան այդ կապերի վերաբերյալ, մենք ստորև կբերենք միայն մի նոր ուշագրավ փաստաթուղթ՝ 1777 թ. մայիսի 6-ին Մոսկվայից Մադրաս՝ Շահամիրյանին գրած Աղազար Նազարբեթի (Հազարյանի) անտիպ նամակը, որը լույս է սփռում հնդկահայ գործիչների կապերի և նրանց կուտարած դերի վրա։

Նամակի սկզբում Հազարյանը Շահամիրյանին հայտնում է, որ յտացել է անցյալ տարվա ամիսի 9-ի ու նազար ամսի 20-ի և այս տարվա հունիսի 4-ի ու օգոստոսի 10-ի նամակները, պատասխան գրել է անգլիացի Թոմսոնի գրասենյակի միջոցով, որ Հոնդոնից նավով պետք է հասնի իրեն։ Այնուհետև ուրախ և առողջ կյանք բարեմաղթելով իր «ամենասիրելի» Շահամիրյանին, ասում է. «ձեռք պարծեսցի ազգ մեր ողջոյն և մեկ ուրախ լեցուք և խնդալցուք»¹։ Խոսելով ազգային գործերի մասին Հազարյանը գրում է.

«Իսկ թե գոր ինչ ի բնածին և հատուկ ազգասիրութենէտ վասն այժմ ժամանակիս Արցախ յաշխարհի հայոց եղեալ մէլիք Յովսէփին, այլոց մերոց անտի նախարարաց, նաև վրաց Հերակլ արքային, մեր օգնութեան հասուցանելոյն, և կամ ի կողմանէ տէրութեանս ըռուսաց նպաստաւորութիւն գտանելոյն, գրեալ էիր, բարւոյ յուսով և յորդորմամբ ցուցանելով և զհարմարութեան ժամանակիս, թէ զիարդ օւմանցիք նվաղեալ գտանին ի զօրութենէ, կամ պարսիկք տկարք ի իշխանութեան իւրեանց և թէ քանեօք մեծք են, կորովիք և քաջամարտք մելիքներն մեր, որք զթշնամիս իւրեանց գողացուցանեն, և թէ նոքա միայն գտան ի մէնջ, որ զպատիւ ողջոյն ազգիս մերոյ պահենցին, և զայն բոլոր, մտադրութեամբ ընթերցա և ծանեայ զմիտ

¹ Այս և հետագա ընդգծումները իմն են — Վ. Պ.։

տեառնդ իմոյ և բարեկամիտ և րդարև սյգպիսի զիտումն թոյ մտաց նախանձաւորութիւն և բարեաց ըստ Պողոսի և հայրենասիրութիւն հանդոյն հռչակաւոր արանց հոռմեացոց, և եւասի րլ հաշոցեսցի երբեք մեր ազգին այնպիսի բարեբախտութիւն և վիճակ. յորում զերծնալ ազատեցին և վեհերոտնալ բմբուրենլ ծուլութեան իւրեանց, և յոտն կացցեն ի սիրտ երկրի իւրեանց և ի ազատութեան: Բայց ինձ այդպէս թի, թէ նախ պարտ է ազգին մերոյ, մանաւանդ ի Սղեադ և ի Ղարաբաղ եղելոցն, ունիլ յուսաւորութիւն մտաց, և թողեալ զսնոտի ունայնահաւատութիւն իւրեանց և զոռոգութիւն, կրթեալ և վաստակեալ ի մրցմունս շիտութեան, պատմութեան և աշխարհածանօթութեան, և լինել հասու մտօր այնմ նիւթոյ և բանից, զորոց ճառլ բարեյիշատակ որդին թոյ Յակոբ ընդ դաստիարակն իւրոյ հանճարամիտ Մովսէսի¹, և այլ հեղինակի բնաւր:

Երկրորդ. հոգևորականաց մերոց զնոյն բան և նիւթ ձեռնարկեալ, հաւկաւոր է ի Հայաստան եղելոցն, և ուր ուրև գումարելոց ազգացն մերոց, բաւոյնլ, յորդորել զազատութիւն ազգի և սրբութեան իւրեանց ի մտի նոցա ղենլ, զաշս նոցին բանալ, և ասել րլ ոչ պահ ոչ շատախօսութիւն ի յաղօրս ևն օգուտ ազգի, և պատարար բնդունելի և հաճոյ, առաջի աստուծոյ, այլ սեր, միաբանութիւն, և իմաստութիւն, որով զհայրենիս ձեր և սրբութիւն սուրբ տեղեաց մերոց և զղամբաբանս նախնեաց՝ զերծուցանիցլք, որ այսու խրանալ զարբիցլն նոքա, և ըստ այնմ որ ազգն մեր ողջոյն հպատակը ևն հոգևորականաց և ի շրթունս նոցա հայօդը, հետեւնացն զիտութեան, սիրոյ և միաբանութեան:

Երրորդ. յորժամ ըստ վերողբեցեալ բանից լիցեն և գտանիցեն նորա պատրաստը և հասակաւորեալը ի կատարեալ միտս յուսաւոր, յայնժամ հարկ է նշնիսկ մէլիք և դամիւն, Յովսէփին և Նսային կամ ի միասին կամ առանձնարար, և կամ որպէս տէր յաջողեսցէ, իմանգամայն լնդոստնուլ յառնել ի վերա զինքեանց տիրողացն յախրել զնոսա և վաւելլ, և առնել զինքեանս ինքեանգլուխ, ապա ընթանալ իրաւամբ, արդարութեամբ, առ շարսն խստութեամբ և առ բարիսն խնամածութեամբ, զի լիցի զործ կատարեալ, և այցելութիւն ազգի, ուստի թէ սոյնպիսի զործ այնպէս սկսանիցի, որպէս ինչ թուի, և որպէս ընդ այլոց իսկ բազմաց ազգաց, զինքեանս ղերծուցանողաց եղև և յաջողեցաւ ըստ պատմութեան, կարելի է, ապա թէ ոչ դժուարին է մեղ և միով ծայրի մատին փորձ առնուլ կամ յօղնութեան հասանել, զի իրաւի բարեյիշատակ մեծն Պետրոս ըրուսաց, թէպէտ կամ արար Հաւաստեանալ մոտանալոյ կամ զծով Վրկանի տիրապետելոյ, որ և տիրապետեաց իսկ և զմեանս ի ուզրաշեանց մերոց, այսինքն զԱվան խանն, զԲաղի, զԹաւրիսան, զԵրվզոր (որ է հայր իմոյ փեսային) ուզրաշիսն և զայսս ողորմածարար հրովարատակաւ կոչեաց, զբաղումս մեծամեծ խոստմունս արար, թէ, կամ զերկիրն նոցա ազատելով շնորհելոց է նոցա ի կատարեալ ժառանգութիւն, կամ Կասպիական զծով ընդ եզերօրն տալոց է ի բնակութեան: Սակայն ըստ անբախտութեան մերոյ ազգի, մեծ կայսերն այն, վաղահաս կոչմամբ կոչեցաւ ի յերկնային կեանս, յետոյ Կասպիականն կրկին դարձուցին Պարսից, և սոյն ուզրաշիքն ի թարաւորանցն ապա եկելոյ (Վ. Պ.) ոսճիկ ստանալով և զաստիճան, մնացին ի Աստրախան և տնաւորեցան, և ի ընթացս իրր 60-ից այսոց ամաց անցելոց մեռան անդ և թաղեցան, և ըրոր սկսուածը այն երանելի արքային ըստ այսմիկ մասին մնացին անկատար:

Բսկ ի այսմ ժամանակի, յորժամ տէրութիւնս այս վարէր պատերազմ ընդդէմ օսմանցոց, հաճեցաւ և առաքեաց զօրս իրր 6 հազարս ևնթ միոյ ևնեբայի ի Իմլըթ և ի յաշխարհն Վրաց, որ և պատուեաց Հերակլ արքային ասպետական նշանաւ սրբոյ Անդրէի, բայց ի դադարիլ մարտին, զօրքն մեր եղեալ անտի, վերստին դարձան ի յերկիրս և Վիրքն մնացին ըստ առաջնոյն, որպէս էին:

Եւ ի 1775 թուին անցելոյ, անօրէն Ֆէթալի խանն Դարբանդու նեղեալ ի Ուցմին ումեմն իշխանէ, և ի այլոց զազանաց յայնկոյս Կաւկասսին լերանց բնակողաց, առաքեաց ի դուռ ողորմած թաղուհոյն մերոյ զղեսպանս իւր, և զբանալիս Դարբանդ բաղարի հանձնելով զինքեան և պտէրութիւնն իւր ըրոր խնամոց և օղեսկանութեան նորա.. ինչ թէ ողորմած թաղուհին մեր, պահիցլ զնա ևնթ նախախնամութեան իւրոյ, որև հաճեցաւ ողորմածօրէն սակս սահմանակցութեան նորա, օղենլ, նմա և դարձուցանելով նմա զղեսպանս և զբանալիս, հրամայեաց իւրոց սահմանակալ զօրացն վանել զթշնամիս նորա, և պահել նմա ի խաղաղութեան. ուստի և նոյն յամի կորչեցին զթշնամիսն, և պահէին զԴարբանդ մերօր զօրականօր: Հազիւ ամ մի անցաւ որ ի Անդալու (Վ. Պ.), մեր մի նաւ յաւել 80 հոգւով և 60 թէ 70 հազար թումանի ընթօր ի Աստրախան նաւելով զայ և ի փորձութեան ալեաց պատահեալ ոչ հեռի ի Դարբանտայ, վարի ի

¹ Մովսէս Բաղրամյանի մասին է խոսքը, որի «նոր տեստակ սր կոչի յորդորակ» հայտնի գրքի հետ, ինչպէս այս նամակից երևում է, Լազարյանը ծանոթ է Վ. Պ.:

յամար, և անօրէն խանն զայն իմացեալ, գողունի կերպիւ յափշտակէ զամենայն ինչս նաւոյն և զանձինս սրախողխող արեալ, ձեացուցանէ զինքն անպարտ և անտեղեակ անցիցն ամենից. ուստի բարկացեալ տէրութեան մերոյ թողնն զբարբարոսն զայն ի նախախնամութենէ իւրեանց և յայսմ ամի հաննն զգօրն ի Դերբենտոյ և ի նորին սահմանաց, որ այժմ ի տէրութենէ աստի ոչ որ գոյ անդ, և ոչ ես կամին զայնպիսի բարբարոսն զիտելի:

Ոչ ինչ պատկանի առ առարումն անդ ոմանց կարգաւոր անձանց, կամ օֆիսիալից, զոր բարեմիտ բարեկամս իմ տաս մեզ խորհուրդ առերկոյ, յոյժ բարի է, և թարց մերոց ծախուցն, և ուղևորելոցն, բաղումք օֆիսիալք և զէտք ինքեանք ինքնայոժար կամեյողութեամբ իւրեանց և սիրահարութեամբն ի վաղուց յետէ գնացեալ իցէին, եթէ թողեալ իցէր նոցա գնալ, ապա ոչ գոյ հնար, զի հրաման տեառնէ թագաւորի և իրաւունք բաղարական դրութեանց ռուսաց, ոչ զոր թողուլ յայսպիսեաց առ այն կողմն, ուրեմն այն միայն է ճանապարհ, որ եթէ կամիցէն զէտք անձինք և օֆիսեալք այն կողմն աշխարհի գնալ, գնացեն Սեաւ ծովան, կամ ընդ այլ ճանապարհ, զոր գտցեն արձակ:

Վերջապես այլ զի՛նչ ես ասացեց ամենասիրելի իմոյ բարեկամիտ, զի զոր բոյ է հայցուած և սէր, այն և մեր իսկ է ցանկութիւն և հոգւոյ տառականք, միայն թէ աստուած ինքն յաջողեցնէ, կամ բարեբախտ ուրուք հանգիպմամբ, կամ ազգի հետեղութեամբ և արիութեամբ. յորոյ մի և գու ճանաչիս օրհնեալդ ի յազգս մեր, վասնորոյ արժան է ոչ միայն զԲեզ զովն, այլև յաղօքս յառնել վասն Բոյ. զի սիրովն Բոյ և յօրդիւնեօք, աբ բաղումք բորբոքեցին, և ի նոյն զմիմեանս յորդորեացն առ ի փրկութեան յանուրց հայկազեանցս ամէն»¹:

Հաղարայանի այս շատ կարևոր նամակը, Ղուկաս կաթողիկոսին և Հերակլ 2-ին գրած Շահամիրայանի հայտնի նամակները, Սիմոն Երևանցի կաթողիկոսի բանադրանքը Մ. Բաղրամյանի «Նոր տետրակի» վերաբերյալ և այլ պատմական վավերագրեր ցույց են տալիս, որ Մաղբասի հայ գաղութը, հատկապես նրա առաջատար հայ գործիչները, ինքնամփոփ, մեկուսացած չեն ապրել ու գործել, ինչպես այդ ներկայացնում է ընկ. Կարինյանը, նրանք բավականաչափ լայն կապեր ու հարաբերություններ են ունեցել հայ ժողովրդի տարբեր հատվածների աչքի ընկնող ներկայացուցիչների և նույնիսկ շահագրգռված բաղարական շրջանների հետ:

Ինչպես դժվար չէ նկատել, ընկ. Կարինյանի արժեքավոր աշխատության այս բաժնի թերություններն ու վիճելի գնահատականները, գերազանցորեն վերաբերում են պատմության հարցերին, պատմական զեպրերի ու դեմքերի ընթացմանը:

Ընկ. Ա. Կարինյանի մենագրության մոտ երկու երրորդը նվիրված է հնդկահայ պարբերական մամուլի պատմությանը: Եւ նրա գրքի ամենահետադրական և ամենաարժեքավոր մասն է, հագեցած փաստական նյութերով և օրիգինալ եզրակացություններով: Այդ բաժնում հեղինակը հանգամանորեն քննության է առնում Հնդկաստանում հրատարակված «Ազգարար» (1794—1796), «Շտեմարան» (1822), «Ազգասեր» (1845—1848), «Ազգասեր Արարատյան» (1848—1852), «Ուսումնասէր» (1849—1853) և «Եղբայրասէր» (1862—1863) պարբերականները, կոնկրետ փաստերի հիման վրա վերլուծում է նրանցում արժարժված հասարակական-քաղաքական, տնտեսական և կուլտուրական խնդիրները, փորձում է ցույց տալ դրանցից ամեն մեկի տեղն ու դերը մեր մամուլի պատմության մեջ:

Առանձնապես ուշագրավ են հայ անդրանիկ պարբերական «Ազգարար»-ին և «Ազգասեր» ու «Ազգասեր Արարատյան» թերթերին նվիրված էջերը: Հեղինակը ուսումնասիրելով Երևանի Պետական Մատենադարանում պահվող «Ազգարար»-ի միակ օրինակը², հանգամանորեն վերլուծում է այդտեղ տպագրված կարևոր հոդվածները, խոսում է «Ազգարար»-ի խմբագիր և հրատարակիչ Հարություն Բախնա Շմավոնյանի մասին, ընդթափում է նրա աշխատանքը, նրա հասարակական-քաղաքական հայացքները, Հայ անդրանիկ պարբերականի մասին եղած ուսումնասիրությունների մեջ ընկ. Կարինյանի կատարած աշխատանքը ամենից ավելի ծավալուն և զիտական արժեք ներկայացնող գործն է: Նրա աշխատությունը ավելի կշահեր, եթե հե-

¹ Центральный Государственный Исторический Архив СССР в Ленинграде ф. 880, д. № 610, л. 26—27 об.

² Ի դեպ, դա «Ազգարար»-ի միակ օրինակն է ոչ միայն Հայաստանում, այլև ամբողջ Մոսկովական Միության մեջ. Մոսկովայի Լենինյան գրադարանը, Լենինգրադի Սալտիկով-Շչեպիրինի անվան հանրային գրադարանը ևս չունեն այդ թերթը: Մատենադարանի գիրքակցիան պետք է միջոցներ ձեռք առնի «Ազգարար»-ը բազմացնելու՝ այդ միակ օրինակի պահպանությունը ապահովելու և ուսումնասիրողներին մատչելի դարձնելու համար:

դինակը օգտագործելը «Ազգարար»-ի մասին հղած նախորդ ուսումնասիրությունները: Մենք առաջին հերթին նկատի ունենք հնդկահայերի պատմությանը լավատեսական Մեսրոպ Սեթի աշխատությունները: Մի գիտություն ևս «Ազգարար»-ի կապակցությամբ:

Ընկ. Կարինյանը իր աշխատության մեջ կանգ է առնում «Հայոցի հայն» և «Ազգակից» ծածկանուններով «Ազգարար»-ում տպված հոդվածների հնդկականների բանավեճերի վրա և գտնում, որ հակառակ դիրքերից գրված այդ հոդվածները «կազմել է մի անձնավորություն», Հ. Ք. Շմալոնյանը (էջ 224): Մեր կարծիքով դա համոզեցուցիչ է: Դեռևս 1924 թ. ընկ. Ք. Ավգարիկյանը ենթադրել է, որ «Հայոցի հայն» Մովսես Բաղրամյանն է, իսկ «Ազգակից»-ը Շահամիրյանը: Հայ հասարակական-քաղաքական մտքի պատմության համար կարևոր այդ բանավեճերի հնդկականների հարցը մանրակրկիտ բանասիրական հետազոտության հարց է: Մենք դրան կանգնադրանք առանձին հոդվածով:

Ընկ. Կարինյանը արժեքավոր ուսումնասիրություն է կատարել հայ նշանավոր դրող Մեսրոպ Քաղիադյանի խմբագրությամբ 1845—1852 թթ. Կալկաթայում հրատարակված «Ազգասեր» և «Ազգասեր Լեռնառան» թերթերի մասին:

Մեսրոպ Քաղիադյանը, նրա հրատարակած թերթերը աչքի ընկնող դեր են կատարել հայ հասարակական կյանքում: Քաղիադյանը Լեռնառանի, Լեռնայանի, Նաղարյանի և մյուս պրոգրեսիվ գործիչների հետ, մեծապես նպաստել է 19-րդ դարի առաջին կեսի հայ հասարակական մտքի զարգացմանը, կրթության ու լուսավորության տարածմանը: Ընկ. Կարինյանը ամենայն բարեխղճությամբ թերթել, ուսումնասիրել է Քաղիադյանի հրատարակած թերթերը, բազմաթիվ քաղվածքներ է կատարել, ցույց տալով համար նրանց շնչաված տնտեսական, քաղաքական, կուլտուրական, ազգային կրթական և այլ հարցերը, նրանց մոտեցումը, ուղղությունը, խաղացած դերը և այլն:

Պետք է ասել, որ մեր բանասերներից ոչ ոք այդպիսի մանրամասնությամբ չի ուսումնասիրել «Ազգասեր» և «Ազգասեր Լեռնառան» թերթերը, ինչպես ընկ. Կարինյանը: Նա առաջինն է, որ փաստական հարուստ նյութերի հիման վրա բացահայտում է այդ թերթերի բովանդակությունը, նրանց հասարակական-քաղաքական-կուլտուրական մոտեցումները, նրանց կատարած պրոգրեսիվ դերը:

Այդ բոլորի հետ մեկտեղ, հնդկական գուգահեռ կերպով ընկնում է նաև խմբագրի՝ մեր անվանի դրող Մեսրոպ Քաղիադյանի գործունեությունը, ցույց է տալիս նրա դերը որպես հմուտ և հռչակալիկ խմբագրի, տաղանդավոր հրապարակախոսի, որպես ազատասեր և հայրենասեր գործչի: Ընկ. Կարինյանը սահուն ոճով շարադրում է Քաղիադյանի հասարակական-քաղաքական հայացքները, նրա խիստ բացասական քննադատական գերաբեկումները գաղութարար տերությունների և մասնավորապես լեզկաստանում վարած նրանց գիշատիչ գաղութային քաղաքականության նկատմամբ, ցույց է տալիս նրա ջերմ համակրանքը անդլիական գաղութարարների ծանր լծի տակ հեծող հնդկ մեծ ժողովրդի հանդեպ: Քաղիադյանը աչքի ընկնող դեր է կատարել հայ և հնդկ ժողովուրդների բարեկամական կապերի պատմության մեջ: Իսկ առժամեի է հատուկ ուսումնասիրության, այնպես, ինչպես հայ-հնդկական հարաբերությունների պատմությունն առնաստի՛կ:

Խոսելով Ներսես կաթողիկոսի և Քաղիադյանի փոխհարաբերությունների մասին, ընկ. Կարինյանը գրում է, որ Քաղիադյանը հնդկաստանում կորցնելով իր ոտքի տակի հողը, մտածում էր տեղափոխվել հայրենիք — «Ազատագրված Հայաստան», բայց նա գրեթե, որ «Լեռնառան» հայրենիքում կրեղձարվի Ներսես կաթողիկոսի հետ: Գրեթե նաև այն, որ միանալ Ներսեսի դեմ մարտնչողների շարքերին՝ չի կարող» (էջ 370):

Մեր կարծիքով այս ձեռնարկումը ճիշտ չէ: Նախ չի բացատրված, թե ինչու Քաղիադյանը, որ կու էր անում հնդկահայերին վերադառնալ հայրենիք, ինքը չվերադարձավ, այլ զնաց Շիրակ, որտեղ և մահացավ: Երկրորդ, Ներսեսի կաթողիկոսության տարիներին նրա դեմ կառավարական շրջաններում «մարտնչողների շարքեր» չկային: Ներսես կաթողիկոսը ցարական կառավարության,

¹ Armenians in India from the earliest times to the present day a work of original research by Mesrobian Jacob Seth, Calcutta, 1937. Madras the birthplace of Armenian journalism a history of the first Armenian journal Azdara published monthly at Madras by the Rev. Arathoon Shumavon in 1794. by Mesrobian J. Seth, Calcutta, 1937.

* Տե՛ս «Վերելք», 1924, № 2—3 «Հայ անդրանիկ պարբերականն ու նրա խմբագիրը», «Նորք», 1924, № 4, «Ֆրանսիական մեծ սեռյուցիան և ժամանակակից հայերը» հոդվածները:

Իովկասի փոխարքայության հետ զործում էր շատ հաշտ ու համերաշխ, նա գլխավորում էր հայ իրականության ռեակցիոն ուժերին և ցարիզմի օգնությամբ պայքարում պրոգրեսիվ, դեմոկրատական ուժերի դեմ:

Այնուհետև չի կարելի 19-րդ դարի 40—50-ական թվականների ցարիզմի զաղութային տիրապետության տակ գտնվող Հայաստանը անվերապահորեն կոչել ռազմատարած Հայաստան (էջ 370): Հայտնի է, որ Հայաստանի և հայ ժողովրդի մի մասը միանալով Ռուսաստանին սղատաղրվեց պարսկական բռնակալության լծից, բայց դա հայ ժողովրդի իսկական աղատաղրությունը չէր. նա այնուհետև բնկավ ցարիզմի լծի տակ և միայն Հոկտեմբերյան հեղափոխության շնորհիվ ձեռք բերեց իր իսկական, վերջնական ազատությունը:

Ընկ. Կարինյանը իր աշխատության մեջ քանիցս նշում է, որ Նիկոլայ 1-ը ղեկավարիտների պահիճն էր, ուսումնական ժողովրդի թշնամին և այնու մեծ ժողովրդի թշնամին, հասկանալի է, չէր կարող հայ ժողովրդի ազատարարը լինել: Հայ ժողովրդի իսկական բարեկամն ու ազատարարը ուսումնական ժողովուրդն էր: Մարքսիստ պատմաբանի համար այս հարցում երկու կարծիք չի կարող:

Իր մոտեցմամբ այս բաժնում ընկ. Կարինյանը խոսում է նաև «Շտեմարան», «Ռուսումնասիր» և «Ներքալիստ» թերթերի մասին: Մամուլի պատմությանը դրավորներին ոչ որ այդ թերթերի վրա լուրջ ուղադրություն չի դարձրել: Նրանցից շատերը անտեսել կամ կցկոտր տեղեկություններ են հաղորդել դրանց վերաբերյալ: Ընկ. Կարինյանն առաջինն է, որ մանրակրկիտ հերքում ուսումնասիրել է այդ թերթերը, ցույց տվել նրանց կատարած դերը, նրանց բռնած դիրքը հասարակական-քաղաքական, ազգային, կրթական, կրոնական և այլ հարցերում: Ամբողջական նորություն լինելով, հեղինակի այդ ուսումնասիրությունները լրացնում են հայ պարբերական մամուլի պատմության մեջ եղած բացը, հարստացնում են այդ պատմությունը: Հեղինակը հայ մամուլի պատմությունից դուրս են մնացել «Հայկի կալվածք» (1829 թ., Կալվածք), «Սինդիկատ» (1847, Սինդիկատ), «Բանասիր» (1848, Մադրաս), «Արևելյան անդկաց լրագիր» (1863—1865, Կալվածք) և այլ պարբերականներ: Լավ կլիներ, այդ թերթերը նույնպես ուսումնասիրվեին, որով կամբողջականացվեր հեղինակի հայ մամուլի պատմության բաժինը:

Վերջացնելով Մեր քննադատական գիտությունները, որոնք, ինչպես դժվար չէ նկատել, գերադանցորեն վերաբերում են ընկ. Կարինյանի աշխատության մեջ շոշափված հայ ազատագրական շարժումներին և հայ հասարակական մտքի պատմության հարցերին, բնավ չեն համաձայնում այն խոշոր աշխատանքը, որ կատարել է հեղինակը Ուրախալը է, որ բուլղարական չին գվարդիայի ակադեմիայի ներկայացուցիչներին մեկը, անվանի գրականագետ ընկ. Արտաշես Կարինյանը ձեռնամուխ է եղել հայ պարբերական մամուլի մարքսիստական պատմությունը: Ստեղծելու շնորհակալ զործին: Նրա կատարած ուսումնասիրությունը արժեքավոր ավանդ է հայ պարբերական մամուլի և հայ հասարակական մտքի հարուստ պատմության մեջ:

Վ. ԳՍԻՍԻԱՆ